**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.2**

«ՀՀ ԱԱԾ-ՏԱևԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11-ը փետրվարի 2026թ.
ժամը 12:30

Մասնակցում էին՝
նախագահ՝
- ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից, Ա. Խաչատրյանը,

անդամներ.
- ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից, Պ. Հովհաննիսյանը,
- ՀՀ ԱԱԾ ՏԱ և ԿԿԳՎ աշխատակից, Ս. Սահրադյանը,

Քարտուղար
- «Փրոմոուշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, Վ. Էլոյանը

**1. «ՀՀ ԱԱԾ-ՏԱևԿԿԳՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀՊՍ1» ծածկագրով ընթացակարգի պարզաբանման՝ հարցադրման մասին.**

---

**(Ա. Խաչատրյան)**

**1.1. 09.02.2026թ-ին ժամը 15:17:08-ին, 10.02.2026թ-ին ժամը 19:42:37-ին և 10.02.2026թ-ին ժամը 20:13:18-ին** Մասնակիցների կողմից ստացվել են հարցումներ (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

Հարցում 1

«Հարգելի Պատվիրատու, 40-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարթրիջի տպագրության քանակը՝ առնավազն՝1350 էջ, վերաբերվում է միայն սև քարթրիջին: Այս տպաքանակը նշված է նաև տվյալ քարթրիջի մյուս գույների ներքո, որոնք տպում են ավելի քիչ: Խնդրում ենք տալ պարզաբանում: Կանխավ շնորհակալություն»:

Հարցում 2

«Հարգելի Պատվիրատու, 36-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է, որ. մեջբերում եմ <<Ապրանքի լրակազմում ներառված լինի համապատասխան չիպ>>: Նշված քարտրիջները, անգամ օրիգինալները և արտադրող գործարանն արտադրում է առանց չիպի: Կարելի է արդյոք հասկանալ, որ նշված պահանջը վերաբերելի է, որ քարտրիջները իրենց գործարանային փաթեթավորման մեջ ունենան էլեկտրոնային հիշողության համակարգ (հաճախ անվանում են չիպ), որը կարող է ապահովել Տպագրության նվազագույն քանակ՝ առնվազն 2000 էջ:»:

Հարցում 3

«Հարգելի պատվիրատու 54-րդ չափաբաժնով 12 հատը նշանակում է յուրաքանչյուր գույնից 2 հատ թե՞ պահանջելու եք յուրաքանչյուր գույնից 12 հատ»:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**1.2.** Հանձնաժողովը որոշեց պատասխանել հարցում ներկայացրած Մասնակիցներին (կցվում է) հետևյալ բովանդակությամբ՝

Պարզաբանում 1

«Հարգելի գործընկեր, 40-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարթրիջի տպագրության քանակը՝ առնվազն 1350 էջ (A4 ֆորմատի թղթի 5% լցվածության դեպքում) վերաբերվում է միայն սև գույնի քարթրիջին: Մյուս 3 գույների քարթրիջներից յուրաքանչյուրի տպագրության քանակը պետք է լինի՝ առնվազն 1250 էջ (A4 ֆորմատի թղթի 5% լցվածության դեպքում):»:

Պարզաբանում 2

«Հարգելի գործընկեր, 36-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված «Ապրանքի լրակազմում ներառված լինի համապատասխան չիպ» նախադասության իմաստը կայանում է նրանում, որ եթե Ձեր կողմից առաջարկվող տվյալ տեխնիկական բնութագրին համապատասխանող քարտրիջը աշխատում է չիպով, ուրեմն լրակազմում պետք է ներառված լինի համապատասխան չիպ: Իսկ եթե առաջարկվող քարթրիջն աշխատում է առանց չիպի, ուրեմն վերջինիս լրակազմում լինելու անհրաժեշտությունը չկա:»:

Պարզաբանում 3

«Հարգելի գործընկեր, 54-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված քարտրիջի լրակազմը բաղկացած է 6 գույնից: Մեր կողմից պահանջվել է 12 լրակազմ, այսինքն՝ յուրաքանչյուր գույնից 12 հատ:»:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**Հանձնաժողովի նախագահ՝** ______________________ **Ա. Խաչատրյան**

**Անդամներ՝** ______________________ **Պ. Հովհաննիսյան**

______________________ **Ս. Սահրադյան**

**Քարտուղար՝** ______________________ **Վ. Էլոյան**